«ՏԻՐԱՄՈՐ ՅՈԹ ՎԵՐՔԸ» ԿՏԱՎԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՆԻՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երևանի պետական պատկերասրահի հայկական բաժնում ցուցադրվող աշխատանքներից մեկը «Տիրամոր յոթ վերքը» (տե՛ս նկարը) կտավն է (չափերը՝ 184×109, № Ж—853/1278)։ Այն երկար ժամանակ գտնվել է Էջմիածնի վանքում, որտեղից 1931 թ. բերվել է պատկերասրահ։ Վատ վիճակում մեզ հասած այդ աշխատանքը 1953 թ. հիմնովին վերանորոգվել է[1]։

«Տիրամոր յոթ վերքը» կտավին առաջինն անդրադարձել է Եղիշե Մարտիկյանը։ Նկատի ունենալով Հ. Շահխաթունյանի[2], Ն. Ակինյանի[3], Ս. Աստվածատրյանի[4], Ա. Զոպանյանի[5] աշխատություններում XVII դ. նշանավոր մատենագիր, թարգմանիչ և փիլիսոփա Ստեփանոս Լեհացուն նկարիչ համարելու կարծիքները, ինչպես նաև իր կատարած համեմատությունները նույն ժամանակաշրջանի մի շարք այլ նկարների ոճի հետ, Ե. Մարտիկյանն այն եզրակացությանն է հանգել, որ «Տիրամոր յոթ վերքը» Ստեփանոս Լեհացու (1609—1687/1699 թթ.) գործերից է՝ կատարված 1651 թ.։ Սակայն ուսումնասիրողն ունեցել է որոշ երկմտանք. «Ս. Լեհացին, ըստ նրա կենսագիրների հաղորդումների, հիմնականում զբաղվել է պատմությամբ, գրականությամբ, թարգմանություններով, կյանքի զգալի մասը հատկացնելով այդ զբաղմունքին. սակայն նրան վերագրվելիք ստեղծագործությունները այնպիսի բարձր որակի են, որին կարող էր հասնել երկարամյա փորձի տեր, մասնագիտական լավ կրթություն ստացած մեծատաղանդ նկարիչը»[6]։

Արվեստաբան Մանյա Ղազարյանը «Տիրամոր յոթ վերքը» վերագրում է Հակոբ (ավագ) Հովնաթանյանին (1685/1690—1757 թթ.)։ Նա հիմնականում ելնում է Հակոբ Հովնաթանյանի ձեռագիր «Հայսմավուրքի» և Աստապատի եկեղեցում գտնվող Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի դիմանկարների հետ կատարած համեմատություններից։ Նկարի պատկերման ժամանակը Մ. Ղազարյանը համարում է 1727 կամ 1729 թվականները. կտավի ներքևի

---

1 Վերանորոգման աշխատանքները մեծ հմտությամբ կատարել է թանգարանի նկարիչ-restավրատոր, կուլտուրայի վաստակավոր գործիչ Վարդգես Բաղդասարյանը։

2 Հ. Շահխաթունյան, Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հին գավառաց Արարատ, Ա. էջմիածին, 1842, էջ 45։

3 Ն. Ակինյան, Ստեփանոս վրդ. Լեհացի («Հանդես ամսօրյա», 1912, № 2, էջ 65)։

4 Ե. Աստվածատրյան, Պատկերաց ուցեալ հավաքածու մասնավոր նուիրյանց Մայր աթոռ սուրբ էջմիածնի և շրջակայից, Ա, Վաղարշապատ, 1910, նկ. 13, 16, 19, 23, 25, 27, 30, 31, 33, 34, 38, 39, 40։

5 Ա. Զոպանյան, Նաղաշ Հովնաթան աղուղ և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 29—31։

6 Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն. XVII—XIX դդ., Երևան, 1971, էջ 29—42։

մասում պահպանված հիշատակագրության «ՌՃ» տառերին նա ավելացնում է ՀՋ կամ՝ ՀԸ տասնավորն ու միավորը (1727 կամ 1729)[7]։

Միանգամայն այլ կարծիքի է Ռուբեն Դրամբյանը։ «Տիրամոր յոթ վերքը» կտավը նա վերագրում է հայ նշանավոր նկարիչ Հարությունն Հովնաթան-

յանին (1706—1776 թթ.)։ Ռ. Դրամբյանն իր ենթադրությունը հիմնավորում է Հարություն Հովնաթանյանի վրձնին պատկանող «Տիրամոր փառաբանումը», «էջմիածնի պատմությունը» (պահպանվել է միայն կրկնօրինակը) և «Հովիվների ու մոգերի երկրպագումը» նկարների հետ կատարած համեմատու-

[7] Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դդ., Երևան, 1974, էջ 172—174։

թյուններով, իսկ կտավի պատկերման ժամանակը համարում է XVIII դ. կեսերը[8]։

Այսպիսով, «Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի և թվագրման վերաբերյալ կա երեք տարբեր տեսակետ։

Ստորև փորձենք շարադրել մեր նկատառումներն այդ հարցի շուրջ։ Սկսենք կտավի ներքևի եզրում պահպանված հիշատակագրությունից. «Յիշատակ է պատկերս Աստապատցի Յովսէփ վարդապետէն ի դուռն սբ. Էջմիածնի թ. ՌՃ...»։ Նախ պարզենք, թե ով էր Աստապատցի Հովսեփ վարդապետը, որի նկատմամբ հիշյալ արվեստաբանները, ցավոր, ուշադիր չեն եղել։

Մատենագիտական աղբյուրները և նյութական մշակույթի պահպանված հուշարձանները բավական նյութ են տալիս Հովսեփ Աստապատցու կյանքի և գործունեության մասին։ Հովսեփը եղել է Նախիջևան գավառի Աստապատ գյուղի ս. Ստեփանոս եկեղեցու առաջնորդը[9]։ Հոգևոր ու հասարակական գործունեությունից զատ, նա զբաղվել է նաև մատենագիտական ու մշակութային լայն գործունեությամբ։ Նրա մատենագիտական աշխատանքի պերճախոս վկայությունները Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր մատյաններն են։ Հովսեփ Աստապատցին եղել է ընտիր գրիչ. հայտնի են նրա 1698 թ. ընդօրինակած մի ձեռագիրը (Մատ. № 3913), ինչպես նաև՝ նրա պատվերով 1694 թ. ընդօրինակված Դատաստանագիրքը (Մատ. № 484)։ Մատենադարանի ֆոնդերում պահպանվում են ևս երեք ձեռագիր (№ 5782՝ 1651 թ., № 6751՝ 1693 թ., № 7085՝ 1677 թ. առաջ), որոնց վրա գրոշմված է Հովսեփ վարդապետի անձնական կնիքը՝ պատրաստված 1677 թ.։ Դա նշանակում է, որ արդեն 1677 թ. Հովսեփը Աստապատի հոգևոր առաջնորդն էր, ուներ անձնական կնիք և հարուստ գրադարան։

Մի շարք աղբյուրներ տեղեկացնում են նաև նրա կատարած շինարարական-վերանորոգչական աշխատանքների մասին։ Այսպես՝ Աստապատի ս. Ստեփանոս եկեղեցու տապանաքարերից մեկի վրայի արձանագրությունում նշված է, որ Հովսեփը 1666 թ. վերանորոգել է նույն եկեղեցին[10]։ 1697 թ. մի այլ հիշատակագրության մեջ ասվում է. «Սկիզբն եղեւ շինութեան սուրբ ուխտիս ի կողմն յարեւմտեան կոփածոյ վիմօք, ներքնատնօք եւ վերնատնօք զարդարեալ կամարակապ։ Նա եւ շինող եւ առաջնորդ սուրբ ուխտիս Յովսէփ աստուածաբան վարդապետ, որ եւ զՊատմագիրս զայս (Ագաթանգեղոս) գրել ետ ...Ես Սարգիս գծագրեցի»[11]։ Աստապատցին ապրել է մինչև խոր ծերություն, հասել եպիսկոպոսության աստիճանի և շատ բան է արել ս. Ստեփանոս եկեղեցու համար։

Հովսեփ վարդապետի վերջին հիշատակությունը 1706 թ. է. «...Ի ՌՃՕԵ ամին ես նուաստ եւ թարմատարս Յովսէփ... որ եմ աշակերտ բարունի եւ սրբազան Յակոբ վարդապետին վերափոխեցելոյն առ Քրիս-

---

8 Р. Г. Драмян, Искусство XVII—XVIII вв. («Очерки по истории армянского изобразительного искусства», Ереван, 1979, с. 109—110, см. прим.).

9 Աստապատի մասին մանրամասն տե՛ս Ա. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Ա. Վենետիկ, 1903—1905, էջ 255, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 574—575։

10 Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Վիեննա, 1942, էջ 512։

11 Նույն տեղում, էջ 516։

տոս... իսկ Նարդենիս... կարդեալ վերատեսուչ սուրբ աթոռոյս սուրբ Ստեփաննոսի վանից ի մայրաքաղաքին Աստապատու...»[12]։

Ի դեպ, Հ. Ոսկյանն իր աշխատության մեջ թվարկում է Աստապատի բոլոր վարդապետներին ընդհուպ մինչև XIX դ., բայց Աստապատցի մեկ այլ Հովսեփ վարդապետ չի հիշատակում։ Ուրեմն, կասկածից վեր է, որ «Տիրամոր յոթ վերքը» կտավը մեկ հայտնի Աստապատցի Հովսեփ վարդապետի նվերն է «ի դուռն սբ. Էջմիածնի...»։

Այժմ անդրադառնանք նկարի ժամանակի հարցին։

Հովսեփ Աստապատցու մահվան թվականը որոշակի է՝ 1706 թ., հետևաբար, վստահ կարող ենք ասել, որ կտավը էջմիածնի վանքին նվիրատրվել է ոչ ուշ, քան 1703—1705 թթ.։ Ժամանակի մեր այս առաջադրման հետ, կարծում ենք, անհարիր չէ կտավի ցածի հիշատակագրության մեջ նշված «ՌՈՆ» ժամանակագրական տառերի բովանդակությունը։ Եթե նույնիսկ դրանց կողքին ենթադրենք ջնջված տառեր, և ավելացնենք «Ա» տասնավոր և «Ա»-ից մինչև «Դ» միավոր տառերը (կլինի՝ ՌՈՆԱ կամ Դ—1703 կամ 1705 թթ.) միևնույն է, ժամանակի որոշման մեր տեսակետը չի փոխվում։ Գուցե խոր ծերության մեջ, մահվան շեմին, Հովսեփը որոշել է սրբապատկերը նվիրել էջմիածնի վանքին։ Նման ճշգրտմամբ ինքնըստինքյան ժխտվում են «Տիրամոր յոթ վերքը» կտավը Հակոբ Հովնաթանյանին (1685/1690—1757) կամ Հարություն Հովնաթանյանին (1706—1776) վերագրելու վարկածները, քանի որ այդ ժամանակ Հակոբ Հովնաթանյանը 13—14 տարեկան էր, իսկ Հարություն Հովնաթանյանը դեռ չէր ծնվել։

Ժամանակի առումով, թերևս, ավելի մոտ է Եղիշե Մարտիկյանի տեսակետը՝ հիշյալ կտավը Ստեփանոս Լեհացուն վերագրելու վերաբերյալ։ Բայց արդյոք Ստեփանոս Լեհացին ի վիճակի՞ էր դազգահային բնույթի նման մի փայլուն աշխատանք կատարել։ Ստեփանոս Լեհացիով զբաղվող մասնագետները նրա թե՛ ծննդյան, և թե՛ մահվան թվականը նշում են մոտավոր։ Ստեփանոս Լեհացին պետք է, որ ծնված լինի 1601—1609 թթ. Լվովում և մահացած՝ 1681—1689 թթ.[13]։ Նա սովորել է Լվովի լատինական բարձրագույն դպրոցում, ուր ուսումնասիրել է ճարտասանություն և փիլիսոփայություն։ Նրա ժամանակակից Սիմեոն Լեհացին Լվովի լատինական դպրոցի մասին

12 Նույն տեղում, էջ 517։

13 Մասնագետների մոտ որոշ տարակարծություն կա այս հարցում. Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրության մեջ նշվում է, որ Ստեփանոս Լեհացին մահացել է մոտ 1685 թ. (Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվ, հայկական ձեռագրեր, հ. 778, էջ 106—107, Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 141)։ Մ. Ջամչյանը գտնում է, որ Ստեփանոս Լեհացին մահացել է 1692 թ. («Պատմություն հայոց», հ. 3, Վենետիկ, 1786, էջ 620)։ Ըստ Գ. Զարբհանալյանի, Լեհացին մահացել է 1681 թ. («Պատմություն հայերեն դպրության», Բ, Վենետիկ, 1878, էջ 362)։ Ղևոնդ Ալիշանը, փոքր-ինչ կասկածելով, առաջարկում է 1685 թ. («Կամենից, տարեգիրք հայոց և Ռումինիո հավաստյալ հավելվածով», Վենետիկ, 1896, էջ 143—144)։ Ն. Ակինյանը «Կարենյան» ցուցակի (թ. 610) մեջ եղած «Թուղթ Յովհաննէս վարդապետի գրեալ առ Իյովացի Ստեփանոս վարդապետի ի Թուին ՌԺԼԸ» գրությունից ելնելով, Լեհացուն մահացած է համարում 1689 թ. (նշվ. աշխ., էջ 64, նաև՝ ծանոթագրություններ)։ Նույն կարծիքին է նաև Լեոն («Հայոց պատմություն», հ. 3, գիրք Ա, Երևան, 1969, էջ 410)։ Այս հարցում մենք հենվում ենք նորագույն ուսումնասիրությունների վրա, նկատի ունենալով մասնավորապես Յու. Ա. Թարվերդյանի «Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները» մենագրությունը (Երևան, 1979, էջ 15) և այլն։

գրում է. «Ես կայր դպրոցն աւելի քան ութսուն տղայ, որք ուսանէին դանադան ուսումս՝ զերաժշտական, քերական, առոգանութիւն, թարգմանութիւն և զարուէստ համարողականք»[14]։ Ուրեմն, Ստեփանոս Լեհացին այստեղ, հավանաբար, նկարչական կրթություն չէր կարող ստանալ։ Նա էջմիածին է եկել Փիլիպոս կաթողիկոսի օրոք (1633—1655)՝ խուսափելով դավանափոխական հալածանքներից[15]։ Էջմիածնում Լեհացին կարճ ժամանակամիջոցում յուրացնում է հայոց լեզուն և ծավալում է մշակութային բեղուն գործունեություն. աստվածաբանական, փիլիսոփայական, թարգմանչական գործունեությունից զատ նա հմուտ է եղել նաև գրչության արվեստում և երբեմն էլ զբաղվել է ծաղկապարդմամբ։

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են Ստեփանոս Լեհացու ընդօրինակած չորս ձեռագրերը։ Դրանք են՝

ա) № 1549, Ներսես Շնորհալի, «Բանք շափաւ», գրված 1646 թ.։ 1662 թ. Լեհացին այն նվիրել է Լվովի ս. Աստվածածին եկեղեցուն. այդ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...զձեռն ի գործ արկեալ, իմ ձեռամբս գծագրեցի և ոսկենկար ծաղկօք և երփն երփն գունօք զարդարեալ ետու, զի լինիցի ի յիշատակ մշտնջենաւոր առաջի աստուծոյ մեծայոյս և երկիրղագարդ ծնողաց իմոց...»։ Այնուհետև՝ «... նաև զՍիմէօն շնորհազարդ և բաջ բաբունի, ծաղկող և կազմող սորին» (թերթ 277բ—278բ)։ Ինչպես նշված է, նրա նկարագարդումները կատարել է Սիմեոն Բաբունին։

բ) № 981, «Ճաշոց», 1653 թ., որի հիշատակարանում կարդում ենք. «...ձեռամբ Ստեփանոսի և ծաղկափթիթ տեսակօք զարդարեցաւ Ալեքսիանոսիւ և Նահապետիւ արուեստաւորօք. հոգացողութեամբ և սատարութեամբ Ստեփանոսի վարդապետի» (թերթ 501բ)։ Հետևաբար, ձեռագրի մանրանկարների հեղինակներն են նկարիչներ Ալեքսանոսը և Նահապետը։

գ) № 1909, Հովսեփ Փլավիոս, «Պատմութիւն պատերազմին Հրէից», 1660 թ.։ Ձեռագիրը մանրանկարներ չունի։

դ) № 5171, Դիոնիսիոս Արեոպագացի, «Մատենագրութիւնք», 1662 թ.։ Ձեռագիրն ունի գլխազարդեր, կիսախորաններ ու լուսանցազարդեր, որոնք, հավանաբար, կատարել է Ստեփանոս Լեհացին[16]։

Ինչպես տեսնում ենք, Ստեփանոս Լեհացու մեզ հայտնի չորս ինքնագիր ձեռագրերում նա հանդես է գալիս որպես գրիչ։ Նրա ինքնագիր ձեռագրերից

---

14 Ն. Ակինյան. Սիմեոն դպրի Լեհացվո ուղեգրություն. Վիեննա, 1936, էջ 336։

15 Փոքր-ինչ տարակարծության տեղիք է տալիս նաև նրա էջմիածին գալու ժամանակի հարցը։ Ըստ Յու. Թարվերդյանի (նշվ. աշխ., էջ 27), Ստեփանոս Լեհացին էջմիածին է եկել 1636 թվականից քիչ առաջ կամ հետո։

Ն. Ղազարյանն ավելի հավանական է համարում Ստեփանոս Ռոշքայի գրքի ժամանակագրությունը (Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվ, հայկական ոչնստորներ, ֆ. 778, էջ 106—107), ըստ որի Ստեփանոս Լեհացին 1646 թ. ծեղների կողմից ուղարկվում է էջմիածին։ Մենք կարող ենք միայն ավելացնել, որ արդեն 1646 թ. նա էջմիածնում ձեռագիր է ընդօրինակել (Մատենադարան, ձեռ. № 1549)։ Կնշանակի էջմիածնում նախօրոք սովորել էր հայերեն, մի բան, որ կպահանջեր մի քանի տարի։ Մ. Ղազարյանը, սակայն, իր տեսակետը իրավացիորեն ճշգրտում է իր խմբագրած Դանիել Դղեանու «Հայ կերպարվեստագետներ» համառոտ բառարանում, գրելով, որ Ստեփանոս Լեհացին էջմիածին է եկել 1632 թ. հետո (Երևան, 1977, էջ 462)։

16 Այս ձեռագրի 365բ թերթի ցածի մասում կատարված ծաղկազարդը, թվում է, հետագայի լրացում է և իր որակով հազիվ թե իրոք ուշագրավ համարվի։

միայն վերջինում խոսք չկա ձեռագրի հետ առնչված այլ նկարիչների մասին։ Դա մենք համարում ենք Լեհացու ձեռքի աշխատանքը, որով էլ կարելի է պարզել, թե նկարազարդման արվեստի ի՞նչ կարողություն է ունեցել Ստեփանոս Լեհացին։ Ձեռագրում հանդիպող փոքրիկ գլխազարդերը, լուսանցազարդերը և մյուս մաս նախշերը կատարված են միջին որակով, որոնք ոչ մի կերպ չեն կարող կապվել վերը նշված ձեռագրերի նկարազարդումների բարձր արվեստի հետ։

Այն, որ Ստեփանոս Լեհացին եղել է ընտիր գրիչ և ծաղկազարդող (տառազարդեր, լուսանցազարդեր և գլխազարդեր) հաստատվում է նաև Մատենադարանի № 1742 ժողովածուում գրիչ Մկրտիչ Լեհացու թողած ընդարձակ հիշատակագրությամբ. «Այլ և գրողի զսկզբնագիր բանից գլխոց կարմրադեղով տեառն Ստեփանոսի հոգիընկեալ քահանայի և իմաստից պարապողի, համագաւառաւ գրոցս գծողի։ Եւ ոսկէնկար ծաղկափթիթ որակաւք պաճուճողի՝ Սիմէօնի վարդապետի ի Քրիստոս հանգուցելոյ մասն բարեաց ձերովք մաղթանօք շնորհեսցի»։ Այդ ձեռագրի նկարազարդումները սկսել է Սիմեոն Բաբունին, որի մահից (1653 թ.) հետո նրա աշխատանքը շարունակել է ժամանակի նշանավոր մանրանկարիչ Հայրապետը։ Վերջինս հայտնի էր հատկապես աստվածաշնչերի նկարազարդմամբ և կրել է «վարպետաց վարպետ» պատվավոր տիտղոսը։ Այստեղ էլ որոշակիորեն նշվում է, որ Լեհացին միայն կարմրադեղով (կարմիր թանաքով) սկզբնագրերն է արտադրել, որը ոչ մի կապ չունի մանրանկարների հետ[17]։

Արդ, հարց է ծագում. ինչպե՞ս կարող էր «Տիրամոր յոթ վերքի» նման մի կտավ ստեղծող տաղանդավոր նկարիչը միայն ձեռագրեր ընդօրինակել և դրանց նկարազարդումը հանձնարարել այլ նկարիչների։ Դա շատ անհավանական է։ Համենայն դեպս, միջնադարյան մեր գրչության և նկարչության արվեստի պատմության մեջ նման դեպք չկա, որ նկարչական ունակության տեր անձը (այն էլ «Տիրամոր յոթ վերքի» նման աշխատանքի) շարունակ բնագրեր ընդօրինակողի դերում հանդես գար։ Մեզ հայտնի մանրանկարիչ-գրիչներն իրենց ընդօրինակած ձեռագրերի մեծ մասն իրենք էլ նկարազարդել են[18]։

Նյույորքաբնակ Պարուրյանի սեփականությունն է հանդիսացել Ստեփանոս Լեհացու միջակ արվեստով նկարազարդված մի ձեռագիրը, որը ցույց է տալիս, թե Լեհացին «գրչութեան հետ իւրացրել էր և ծաղկողութիւնը»։ Ձեռագիրը (պատարագի խորհրդատետր է՝ ոչ ամբողջական), ըստ Գ. Հովսեփյանի ենթադրության, Լեհացու կյանքի վերջին շրջանի գործերից է (1668 թ. հետո)։ Նա գրում է. «...սկզբնագարդը լավ է, բայց ոչ առաջնակարգ, իսկ վեց թևանին յուր դեմքով գեղեցիկ»[19]։

---

17 Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը..., Երուսաղեմ, 1937, էջ 96—97։

18 Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957; S. Der-Nersessian, The Chester Beatty library, A catalogue of the armenian manuscripts, Dublin, 1958; Լ. Ռ. Ադարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII—XIII դդ., Երևան, 1965; Հ. Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարները, Երևան, 1976; Т. А. Измайлова, Армянская миниатюра XI века, Л., 1978; Э. Корхмазян, Армянская миниатюра Крыма, Ереван, 1978 և այլն։

19 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ե. Անթիլիաս, 1951, էջ 15—16։

Իսկ, ընդհանրապես, ի՞նչ տվյալներ կան Ստեփանոս Լեհացու նկարիչ լինելու վերաբերյալ։ Ստեփանոս Լեհացուն նկարիչ համարող հեղինակները՝ Ս. Աստվածատրյան, Ա. Զոպանյան, Մ. Պոտուրյան, Ն. Ակինյան, Հր. Աճառյան, Լեո, մեր օրերում՝ Ե. Մարտիկյան, Մ. Ղազարյան, Վ. Զալոյան, Յու. Թարվերդյան, հիմնականում կրկնել են Հ. Շահխաթունյանի մի ենթադրությունը և նույնիսկ զարգացրել այն։ Հովհաննես Շահխաթունյանից է սկսվում Ստեփանոս Լեհացու նկարիչ լինելու առեղծվածը։ Ուշադրություն դարձնելով էջմիածնի տաճարում գտնվող նկարներին, նա գրել է. «Յամենեսին ի սոսա բաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփաննոսի Լեհացւոյ և քաջ նկարչին հօր Յովնաթանու»[20]։ Փաստորեն սա է սկիզբը և հիմքը տեսակետների այն շարանի, որոնց հեղինակները «առաջ» գնալով խճողել են հարցը։

Ս. Աստվածատրյանը նկատի ունենալով Հ. Շահխաթունյանի ենթադրությունը, իր գրքում զետեղած նկարների հեղինակ համարում է Ստեփանոս Լեհացուն և Հովնաթանյաններին[21]։

Ելնելով Հ. Շահխաթունյանի վերոբերյալ հիշատակությունից, Ա. Զոպանյանը, որոշ վերապահությամբ հանգերձ, հանգում է ավելի հեռուն գնացող հետևության. «Այս հատվածին մեջ (նկատի ունի Շահխաթունյանի խոսքերը—Ա. Ա.) Հովնաթանի հետ հիշված կը տեսնենք ուրիշ վարպետ հայ նկարիչ մը, Ստեփաննոս վարդապետ Լեհացի, որ՝ ըստ Շահխաթունյանի՝ հեղինակ է էջմիածնա նկարներեն ոմանց։ Չեմ գիտեր թե կա՞ն կենսագրական տեղեկություններ այդ Ստեփաննոսի մասին։ Մին պետք է եղած ըլլա լեհահայ գաղթականության այն նշանավոր գործիչներեն, որ Եվրոպայի մեջ ծնած և ուսած. Եվրոպական արվեստն ու ճաշակը կատարելապես յուրացուցած նկարիչ մը եղած ըլլալու է այդ Ստեփաննոսը. և էջմիածնա մեջ այժմ մնացած նկարներեն անոնք որ իտալական ոճ ու հղկյալ կանոնավոր արվեստ ի հայտ կը բերեն, մասնավորապես՝ Ավետաբեր հրեշտակն ու ավետրնկալ Աստվածածինը, Գաբրիել և Միքայել հրեշտակապետները և տասներկու առաքյալներու դիմանկարները, հավանականորեն իր գործն են»[22]։

Հաջորդ բանասերը, որը հոլովում է Լեհացու նկարիչ լինելու պարագան՝ Մ. Պոտուրյանն է։ Սակայն վերջինս որևէ նոր բան չի ավելացնում Ա. Զոպանյանի գրածին, եթե չասենք՝ փորձում է որոշ ճշգրտում մտցնել դրանցում. «Դեռ այս ճյուղին ուսումնասիրությունն ալ իր խանձարուրին մեջ է. 26 նկարները՝ զորս կը հրատարակե պ. Զոպանյան, ամենքն ալ միևնույն հեղինակի՞ն են. ապահովապես ոչ. ինչպես ինքն իսկ արդեն կրսե (էջ 30) Ստեփանոս Լեհացվո նկարչի մը վրա խոսած պահուն»[23]։

Հայ մատենագիտության նշանավոր դեմքերից մեկը՝ Ներսես Ակինյանը, Ստեփանոս Լեհացու մասին վստահորեն խոսում է որպես նկարչի. «Բացի թարգմանութենե, պարապած է Ստեփանոս նաև նկարչությամբ։ Անշուշտ Լեմբերգ հետևած էր նախնաբար նաև նկարչության և ստացած ծանոթություն

---

20 Հ. Շահխաթունյան, նշվ. աշխ., էջ 45։
21 Ս. Աստվածատրյան, նշվ. աշխ.։
22 Ա. Զոպանյան, նշվ. աշխ., էջ 29—30։
23 Մ. Պոտուրյան, Հովնաթան նաղաշ («Բազմավեպ», 1971, № 4, էջ 173)։

նկարչական արվեստին... Շատ հավանական է, որ էջմիածնի տաճարին նկարներու վրա տեսնված իտալական ճաշակն մասամբ Ստեփանոսի ազդեցության տակ նկարված ըլլան։ Ստեփանոս Լեմբերգի մեջ շատ դյուրավ կրնար թափանցել իտալական դպրոցի առանձնահատկությունը»[24]։

Հր. Աճառյանը ևս ակնարկում է Ստեփանոս Լեհացու նկարիչ լինելու մասին[25], բայց նա սոսկ հղում է նախորդներին։ Այս մասին թուցիկ խոսում է նաև Լեոն[26]։

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ միջնադարյան մշակույթի և արվեստի վաստակաշատ երախտավորներից մեկի՝ Գ. Հովսեփյանի արտահայտած մտքերը։ Իրեն հատուկ գիտական անաչառությամբ նա, թերևս, առաջինն էր, որ այս հարցում ցուցաբերել է քննական վերաբերմունք։ Աչքի անցկացնելով Ստեփանոս Լեհացու ընդօրինակած գրչագիր մատյանները, Գ. Հովսեփյանը իրավացիորեն նկատում է, որ գրանցում չի դրսևորվում նրա՝ տաղանդավոր նկարիչ լինելու պարագան։ Ըստ որում, այդ մասին չկա նույնիսկ թեթև ակնարկ գրավոր փաստերում՝ ինչպես իր, այնպես էլ ժամանակակիցների թողած հիշատակագրություններում։ «Ավագ ժամանակակից Առաքել Դավրիժեցին, որ մանրամասնություններ է հաղորդում Նորա Իլովում ստացած կրթության, էջմիածին գալու և առաջին չորս թարգմանությունների մասին մինչև 1662 թվականը, չունի հիշատակություն Նորա նկարիչ լինելու մասին ...եթե Իլովացին նկարչությամբ զբաղված լիներ այդ ժամանակներում,— գրում է Գ. Հովսեփյանը,— կամ ուսած լիներ Իլովում յուր պատանեկության ժամանակ, անկարելի էր, որ Դավրիժեցին չհիշեր, մանավանդ լավագույն ուրիշ մի ոներ այդ մասին գրելու։ Առաքելը, Մինաս և Հակոբջան Ցուցայեցի նկարիչների մասին հիշում է Ստեփանոսի կենսագրությունից անմիջապես հետո, եթե հայտնի լիներ մինչև այդ իբրև նկարիչ, պատճառ չուներ չհիշելու և Նորա անունը իբրև նկարչի»[27]։ «Համենայն դեպս երկոտասան առաքյալների պատկերների Ստեփանոս Իլովացու գործ լինելու միակ վկայությունը մնում է Շահխաթունյանը,— շարունակում է Գ. Հովսեփյանը,— որ սկզբնական աղբյուր չէ։ Բայց նրանք գործերը չեն և Նազաշ Հովնաթանի, որովհետև նորանից առաջ հիշատակված են Սիմեոն կաթողիկոսի Ցուցակի մեջ, որ կազմված է «ՌՄԻԵ» (1776 թ.—Ա. Ա.) թուոջս և ի յօգոստոսի Ժ գրեցաւ»[28]։

Այսպես ուրեմն, Ստեփանոս Լեհացիով զբաղված վերոհիշյալ բոլոր գիտնականներից Գարեգին Հովսեփյանը առաջինն է, որը հակված է ժխտելու Ստեփանոս Լեհացու նկարիչ լինելու հանգամանքը[29]։

---

24 Ն. Ակինյան, Ստեփանոս վրդ. Լեհացի («Հանդես ամսօրյա», 1912, № 2, էջ 65)։

25 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ. Երևան, 1948, էջ 676։

26 Լեո, նշվ. աշխ., էջ 410։

27 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 13—14։

28 Նույն տեղում, էջ 17—18։ 1776 թ. Սիմեոն կաթողիկոսի (1763—1780) հրամանով կազմված «Դավթար և հուշագիր անթիվ և սպասուց սրբո և Միածնիցի տաճարիս» ցուցակի հանձնարարությամբ, եկեղեցու նկարների թիվը 88 էր։ Ընդ որում, նշված ցուցակի մեջ մեկ հետաքրքրող «Տիրասոր յոթ վերքը» (նույնն է՝ «Աստվածածնի, Միածինն մեռեալ ի գիրկն, և յոթն սուր ի սիրտն») կտավը № 11-ն է՝ (Գ. Հովսեփյան, Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրությունը Սիմեոն կաթողիկոսի ժամանակ, «Անահիտ», 1911, մարտ-ապրիլ, Փարիզ, էջ 67—70)։

29 Այդ առումով ուշագրավ են հետևյալ փաստերը։ Ստեփանոս Լեհացին էջմիածնում եղած ժամանակ տաճարին է նվիրել արծաթե բազկաձև մի պահարան՝ ս. Աչը պահելու համար, որի

Գ. Հովսեփյանի կարծիքին համամիտ է նաև Ռ. Դրամբյանը, որը գրում է. «Եթե Ստեփանոս Լեհացին եղել է նկարիչ, ապա բնական էր, որ էջմիածին գալով նա պետք է շարունակեր իր գործունեությունը։ Մինչդեռ էջմիածին գալուց հետո չկա որևէ աշխատանք՝ կատարված Ստեփանոս Լեհացու կողմից։ Գարեգին Հովսեփյանի հայտնաբերած ձեռագրի անվանաթերթի վրայի նկարազարդումները ցույց են տալիս դիլետանտի (սիրողի) ձեռք և ոչ փորձառու նկարչի, ինչպիսին հանդիսացել է 12 առաքյալները վրձնող վարպետը»[30]։ Եվ իրոք, Ստեփանոս Լեհացին էջմիածին է եկել մոտավորապես 1636 թ., ուր ապրել է մինչև իր մահը՝ 1689 թ.։ Արդ, որտե՞ղ են Ստեփանոս Լեհացու վրձնած կտավները, եթե նա այդպիսիք ստեղծել էր 1640—1680-ական թվականներին։

Ստեփանոս Լեհացու՝ որպես XVII դ. հայ նկարչի, ստեղծագործությունների քննությունն առավել հանգամանորեն կատարել է արվեստաբան Մանյա Ղազարյանը։ Բացի նշված գրքից, հեղինակը Ստեփանոս Լեհացուն նվիրել է մեկ առանձին հոդված[31]։ Հավանաբար, նա ևս առաջնորդվելով վերը հիշատակված բանասերների տեսակետներով, Ստեփանոս Լեհացուն համարել է նկարիչ՝ նրան վերագրելով էջմիածնի տաճարում գտնվող մի շարք գործեր։ Այդ կապակցությամբ Մ. Ղազարյանը գրում է. «...Ստեփանոս Լեհացուն են վերագրվում Հովհաննես Մկրտչի խորանի մեջ տեղավորված տասներկու առաքյալների դիմանկարներն ու «Թովմայի թերահավատությունը» պատկերը։ ...Մեզ թվում է, որ այդ նկարների մտահղացումներն ու կոմպոզիցիաները ինքնուրույն չեն, կրում են իտալական ուշ շրջանի նկարչության ազդեցությունը։ Լեհացին միաժամանակ փոխում է տիպաժները, նրանց ավելի է հայկականացնում և մեծ տեղ հատկացնում ձեռքերի ու դեմքի մշակմանը...»[32] և այլն։ Ապա արվեստաբանը շարունակում է. «Ստեփանոս Լեհացուն վերագրվող այս նկարները որոշակի առնչություններ ունեն էջմիածնի տաճարի զանգակատան պատերին՝ վանքի կենտրոնական մուտքի մոտ արված աշխատանքների հետ»[33] (նկատի ունի Պողոս և Պետրոս առաքյալների նկարները)։ Մ. Ղազարյանի ենթադրությամբ, նույնիսկ զանգակատան նկարազարդումները կարող են կատարված լինել Ստեփանոս Լեհացու կողմից կամ նրա ղեկավարությամբ[34]։ Մ. Ղազարյանի մոտ փոքր-ինչ թյուր տպավորություն է ստեղծվել Գ. Հովսեփյանի արտահայտած մտքերի վերաբերյալ։ Ինչպես վերը նշվեց, Գ. Հովսեփյանը որոշակի խոսք չի ասել Լեհացու նկարիչ լինելու մասին։ Անհասկանալի է նաև Մատենադարանի № 1549 ձեռագրի մանրանկարները Ստեփանոս Լեհացուն վերագրելու նրա փորձը։ Նա գրում է. «Լվովի

մասին կա որոշակի հիշատակագրություն («Հանդես ամսօրյա», 1912, № 2, էջ 64)։ Ս. Էջմիածնի մայր տաճարի թանգարանում է գտնվում նաև Ստեփանոս Լեհացու զուարգարդ թագը (XVII դ.)։ Թագի վրա պահպանված է հիշատակագրություն Ստեփանոս Լեհացու մասին։ Երանք առիթ են տալիս ենթադրելու, որ եթե Ստեփանոս Լեհացին էջմիածին բերած լիներ 12 առաքյալների դիմանկարները և կամ ինքը նկարած լիներ դրանք, ապա որևէ հիշատակագրություն կթողներ։

30 Ռ. Դրամբյան, նշվ. աշխ., էջ 107։

31 «Էջմիածին», 1978, 2, էջ 47—56։

32 Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 142, «Էջմիածին», 1978, 2, էջ 55։

33 Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 143, «Էջմիածին», 1978, 2, էջ 55։

34 Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 145։

Աստվածածնի եկեղեցուն 1662 թ. նվիրած Ավետարանի հիշատակարանում Ստեփանոս Լեհացին գրում է, որ ձեռագիրն ինքը ոսկենկարներով զարդարել է գեղապաճույճ, վայելուչ գույներով՝ «ըստ արհեստից յօրինմամբ։ Իսկ Մովսես վարդապետին հիշատակում է որպես «սիրելոյ իմոյ և ուսուցանողի զայս արուեստս»[35]. Մ. Ղազարյանը, հավանաբար, հիմք է ընդունել Ղ. Ալիշանի Կամենից տարեգրքում 1662 թ. տակ բերված հիշատակարանի հետևյալ խոսքերը. «Սկզբնաւորեալ աւարտեցի զհոգեկեցոյց տառս սքանչելի՝ ի ստուգագոյն օրինակաց նախնեաց ցայս վայր հասելոց. իսկ ոսկէնկարէնս իմն տեսակաւ զարդարեալ ետու գեղապաճոյճ արարեալ ի գոյնս վայելուչս, երանգազան որակօք երփնազարդեալ ըստ արհեստից յօրինմամբ. և բոլորապէս ի կատարումն ածի... Զեռնարկեալ էր յառաջագոյն զայս տուփ մատենիս գրել Մովսիսի վարդապետի սիրելոյ իմոյ և ուսուցանողի զայս արուեստ. յորմէ սակաւուք ինչ գտեալ նիւթ և պատճառ եղև իմոյս բովանդակութեանն»[36]։ Բայց այստեղ խոսք չկա Ստեփանոս Լեհացու նկարիչ լինելու մասին։ Հիշատակարանում նշված «...զՍտեփանոս Ելովացի, հուսկ յետինս ի բանասիրաց, գծագրել մատամբ իմով գերանապարփակ և զամենատարփակ մատեանս, գլխոբեքծագեան տիեզերաց համաքարոզ տառս...» խոսքերը վերաբերում են մատյանի գրչությանը, իսկ «ետուս» բառը ինքնին հուշում է ձեռագիրը մեկ այլ նկարչի տալու փաստը։ Մովսես վարդապետը, պարզապես, եղել է Ստեփանոս Լեհացու գրչության ուսուցիչը։

Մեզ չհաջողվեց պարզել, թե Ղ. Ալիշանի վերը բերված հիշատակարանը Ստեփանոս Լեհացու ո՞ր ձեռագրից է վերցված։ Եթե դա, ինչպես Մ. Ղազարյանն է նշում, 1662 թ. Ստեփանոս Լեհացու ձեռքով ընդօրինակված ձեռագիրն է, ապա այնտեղ նման տողեր չկան[37]։ Իսկ եթե նկատի է առնվում Ստեփանոս Լեհացու 1662 թ. Լվովի ս. Աստվածածին եկեղեցուն նվիրած ձեռագիրը, որը ընդօրինակվել է 1646 թ., ապա այնտեղ էլ այլ բան է նշվում[38]։

Այսպիսով, որևէ ռեալ հիմք չկա «Տիրամոր յոթ վերքը» կտավը Ստեփանոս Լեհացու անվան հետ կապելու, առավել ևս նրան պրոֆեսիոնալ նկարիչ համարելու համար։

«Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի հարցը այսօր բաց է մնում։ Հետագա պրպտումները թերևս հայտնաբերեն առայժմ անհայտ տաղանդավոր այդ հայ նկարչին։ Գուցե և, ինչպես Գարեգին Հովսեփյանն էր կարծում, էջմիածնի որոշ նկարների հետ դա ևս բերվել է դրսից, մի բան, որ բացառված չէր XVII—XVIII դդ. հայ եկեղեցական մշակութային կապերի պայմաններում[39]։

---

35 Նույն տեղում, էջ 141, 146։

36 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 193։

37 Մատենադարան, ձեռ. № 5171, թ. 368բ—369բ։

38 Նույն տեղում, ձեռ. № 1549, թ. 275բ, 276ա—279ա։

39 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 18։

О ВОПРОСЕ АВТОРСТВА ПОЛОТНА «СЕМЬ РАН БОГОМАТЕРИ»

АНГИН АРАКЕЛЯН

Резюме

Картину «Семь ран Богоматери» специалисты приписывали перу разных художников: Степаносу Леаци (1651 г.) (Е. Мартикян), художнику Акобу (старш.) Овнатаняну (1727, 1729) (М. Казарян), художнику Арутюну Овнатаняну (сер. XVIII в.) (Р. Дрампян).

На основе данных рукописей и памятников материальной культуры удалось выяснить, что это произведение было подарено Эчмиадзинскому храму Овсепом Астапатци (1620?—1706 гг.), дата смерти которого указывает на то, что картина могла быть подарена в 1703—1705 гг., или немного раньше. Следовательно, авторство художников Овнатанянов отпадает.

Судя по времени написания, работа, скорее, может быть приписана Степаносу Леаци, однако был ли Степанос Леаци художником? Данные историографии говорят нам о том, что оформлением рукописей, написанных самим Леаци, занимались другие художники. Кроме того, современник Леаци Аракел Даврижеци, будучи лично знаком с ним, никогда не упоминал Леаци как художника. Леаци был отличным писцом (каллиграфом), который владел также искусством украшения рукописей (орнаментикой). Из рукописей, написанных и оформленных им, известны две: первая— рукопись № 5171, 1662 г. из Матенадарана, вторая—по сообщению Г. Овсепяна, собственность жителя Нью-Йорка Паруряна. Эти сведения фактически не дают оснований считать Леаци профессиональным художником, каковым был автор рассматриваемого произведения. Такова точка зрения Гарегина Овсепяна. Того же мнения придерживается и Р. Дрампян.